# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.vayotsdzor@mta.gov.am


***Նիստ թիվ 2***

*«28» փետրվարի 2020 թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 28-ի թիվ 2 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 2 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գլաձոր համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
3. 2019 թվականին Գլաձոր համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ներկայացման մասին:
4. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Արամ Դրաստիկի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:
5. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում 2019 թվականին կառուցված գազատարը «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Վայոց ձորի գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղին անհատույց տրամադրելու մասին:
6. «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում» ծրագրի շրջանակներում փոքր դրամաշնորհային ծրագրին համաֆինանսավորում կատարելու մասին:
7. Գլաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հունիսի 26-ի թիվ 58-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
8. Գլաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 30-ի թիվ 17-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
9. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում եկեղեցի կառուցելու համար բարերար Լաուրա Հարությունյանին տեղական տուրքի գծով արտոնություն տալու մասին:
10. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլանը հաստատելու մասին:

11. Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու և ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:

12. Գլաձոր համայնքի բնակիչների կողմից ներկայացված մի շարք դիմումների քննարկման մասին:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.vayotsdzor@mta.gov.am

***Նիստ թիվ 2*** — *«28» փետրվարի 2020 թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18-Ա

### ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 28-ի թիվ 18-Ա որոշման

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

### 1. Եկամտային մաս

Համայնքի բյուջեի եկամուտները 2019 թվականին կազմել է **191698.1** հազ. դրամ, ընդ որում

Հազ" դրամ

| ՀՀ | Եկամտատեսակ | Նախատեսված /տարեկան/ | Կատարողական /տարեկան/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 7000.0 | 7196.8 | 102.8 |
| 2 | Գույքահարկ | 20100.0 | 20456.2 | 101.7 |
| 3 | Տեղական տուրքեր | 800.0 | 1034.5 | 129.3 |
| 4 | ընդամենը հողի վարձակալությունից եկամուտներ | 2200.0 | 2210.3 | 100.5 |
| 5 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 130445.4 | 130445.4 | 100 |
| 6 | Այլ կապիտալ սուբվենցիա | 31333.0 | 15739.2 | 50.2 |
| 7 | Այլ մուտքեր /խմելու ջուր/ | 6000.0 | 4826.7 | 80 |
| 8 | Ծնողական մուծում | 7000.0 | 6321.4 | 90 |
| 9 | Աղբահանություն | 5500.0 | 3467.6 | 63 |
| | **Ընդամենը** | 210378.4 | 191698.1 | 91 |

### 2.Ծախսային մաս

2019 թվականին համայնքի բյուջեից կատարված ծախսերը կազմել է **207752.8** հազ. դրամ, ընդ որում

Հազ" դրամ

| ՀՀ | Ծախսը | Հոդվածը | Նախատեսված /տարեկան/ | Կատարողական /տարեկան/ |
|---|---|---|---|---|
| 1 | Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 44000.0 | 43749.8 |
| 2 | Էներգետիկ ծառայություններ | 4212 | 5500.0 | 3841.7 |
| 3 | Կապի ծառայություններ | 4214 | 500.0 | 392.7 |
| 4 | Գործուղումների և շրջագայությունների ծախսեր | 4221 | 500.0 | 307.0 |
| 5 | Համակարգչային ծառայություններ | 4232 | 400.0 | 340.0 |
| 6 | Տեղեկատվական ծառայությունների ձեռք բերում | 4234 | 200.0 | 2.6 |
| 7 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 1500.0 | 920.0 |
| 8 | Մասնագիտական ծառայություններ | 4241 | 1400.0 | 234.2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | Շենքների և շինությունների, վերանորոգում, շինարարություն | 4251 | 26440.0 | 21099.3 |
| 10 | Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 4252 | 300.0 | 223.0 |
| 11 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 1700.0 | 1254.2 |
| 12 | Տրանսպորտային նյութեր | 4264 | 2200.0 | 1388.0 |
| 13 | Կենցաղային նյութեր, հանրային սնունդ | 4267 | 400.0 | 398.5 |
| 14 | Հատուկ նպատակային նյութեր | 4269 | 2700.0 | 2056.0 |
| 15 | Դրամաշնորհներ | 4637 | 71500.0 | 68682.3 |
| 16 | Այլ կապիտալ դրամաշնորհներ | 4657 | 3200.0 | 3200.0 |
| 17 | Սոցիալական նպաստներ | 4729 | 5450.0 | 5410.0 |
| 18 | Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 65.0 | 65.0 |
| 19 | Պարտադիր վճարներ | 4823 | 100.0 | 94.0 |
| 20 | Շենքերի և շինությունների շինարարություն | 5112 | 46640.0 | 38268.9 |
| 21 | Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում | 5113 | 18813.0 | 11420.6 |
| 22 | Վարչական սարքավորումներ | 5122 | 272.7 | 270.0 |
| 23 | Նախագծահետազոտական աշխատանք | 5134 | 4980.0 | 4135.0 |
| | **Ընդամենը** | | 238760.7 | 207752.8 |

**Համայնքի ղեկավար՝** **Ա. Մովսիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.vayotsdzor@mta.gov.am

*Նիստ թիվ 2* «28» փետրվարի 2020 թ.

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19

## 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ 2019 թվականին համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 28-ի թիվ 19 որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019 թվականի ընթացքում Գլաձոր համայնքում հնգամյա զարգացման ծրագրում ընդգրկված Ծրագրերից իրականացվել են հետևյալները.

| ՀՀ | Ծրագիրը | Ֆինանսավորումը | Արդյունքը |
|---|---|---|---|
| 1 | Գլաձոր համայնքի՝ Գետափ բնակավայրի գազիֆիկացում | Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեից կատարվել է ֆինանսավորում 40%-ի չափով՝ 7 008.0 հազ. դրամ, իսկ 60% ֆինանսավորումը՝ 10 512.0 հազ. դրամ, տրամադրվել է պետական բյուջեից՝ կապիտալ սուբվենցիա | Գլաձոր համայքի Գետափ բնակավայրը ապահովվել է գազամատակարարմամբ |
| 2 | Գլաձոր համայնքի՝ Գլաձոր բնակավայրի մշակույթի տան արտաքին և ներքին դռների, պատուհանների փոփոխում և Գետափ բնակավայրի մշակույթի տան ջեռուցման համակարգի տեղադրում | Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեից կատարվել է ֆինանսավորում 60%-ի չափով՝ 13 826.0 հազ. դրամ, իսկ 40% ֆինանսավորումը՝ 11 546.8 հազ. դրամ, տրամադրվել է պետական բյուջեից՝ կապիտալ սուբվենցիա | Բարեկարգվել են Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի մշակույթի տունը՝ մասնակի: Պահպանել ենք գործող շինությունը հետագա քայքայումից, ջեռուցվելու է Գետափ բնակավայրի մշակույթի տունը: |
| 3 | Գլաձոր խոշորացված համայնքի Գետափ բնակավայրի <<Հոպիկ>> արոտավայրում ջրագիծ - ջրելատեղի կառուցման և դաշտամիջյան ճանապարհի բարեկարգում և Գետափ | Ծրագրի արժեքը կազմել է 7.180.0 հազ. դրամ, իրականացման համար համայնքային բյուջեից կատարվել է | Բարեկարգվել են Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի «Հոպիկ» տանող ճանապարհները, հողագործներն ու |

| | | | |
|---|---|---|---|
| | բնակավայրի <<Բալուկայա>> արոտավայրում ջրագիծ - ջրելատեղի կառուցման | ֆինանսավորում 50%-ի և «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից 50% ֆինանսավորում | անասնապահները կարողանում են անվտանգ երթևեկել մեքենաներով |
| 4 | Գլաձոր համայնքի ՝ Գետափ բնակավայրի վարչական շենքի տանիքում այլընտրանքային արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում | Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեից կատարվել է ֆինանսավորում 45%-ի չափով՝ 6 741.9 հազ. դրամ, իսկ 55% ֆինանսավորումը՝ 8 240.1 հազ. դրամ, տրամադրվել է պետական բյուջեից՝ կապիտալ սուբվենցիա | Գետափ բնակավայրի մշակույթի տունը և վարչական շենքը կջեռուցվեն ամբողջությամբ, կավելանան սեփական եկամուտները |
| 5 | Աղբահանության կազմակերպում | «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ /համայնքային բյուջե/ | Համայնքի բնակավայրերում (Գլաձոր, Գետափ, Վերնաշեն) կանոնավոր կերպով շաբաթը մեկ անգամ կատարվում է աղբահանություն |
| 6 | Գլաձոր համայնքի Վերնաշեն և Գլաձոր բնակավայրերի խմելու ջրի ներքին ցանցերի առանձին հատվածների վերանորոգում | Ծրագիրը իրականացրել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, արժեքը կազմում է 15.924.0 հազ. դրամ, համայնքի ներդրումը կազմում է 20% | Գլաձոր համայքի Գլաձոր բնակավայրը ապահովվել է շուրջօրյա ջրամատակարարմամբ և մաքուր ջրով, իսկ Վերնաշեն բնակավայրում խմելու ջրի օրական մատակարարման տևողությունը երկարաձգվել է |

**Համայնքի ղեկավար՝** **Ա. Մովսիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.vayotsdzor@mta.gov.am

***<u>Նիստ թիվ 2</u>*** **«28» փետրվարի 2020 թ.**

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-Ա

### ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԱՄ ԴՐԱՍՏԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Արամ Դրաստիկի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0�18 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-014-0056-0031/ վարելահողից 0.01 հա-ը փոխադրելու արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսություն հիմնելու համար:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի համաձայն ընդունել վերոնշյալ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու վերաբերյալ որոշում և տալ շինարարության թույլտվություն:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.vayotsdzor@mta.gov.am

***Նիստ թիվ 2*** *«28» փետրվարի 2020 թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳԱԶԱՏԱՐԸ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. 2019 թվականին Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի 6 փողոցներում 954.8 մետր ընդհանուր հատակագծային երկարությամբ կառուցված գազատարը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Վայոց ձորի գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղին (Վայոց ձորի ԳԳՄ)՝ բնական գազի մատակարարման ծառայությունների մատուցման, արդյունավետ շահագործման և պահպանման նպատակով:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին Վայոց ձորի ԳԳՄ-ի հետ կնքելու անհատույց օգտագործման պայմանագիր:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.vayotsdzor@mta.gov.am

***Նիստ թիվ 2*** — ***«28» փետրվարի 2020 թ.***

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22

## «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ԵՎ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 42-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Գլաձոր համայնքը Եվրոպայի Խորհրդի (ԵԽ) կողմից հայտարարված «Համայնքային տարածքների վերանորոգում կամ բարելավում» ծրագրի շրջանակում պարգևատրվել է դրամաշնորհով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Թույլատրել ԵԽ-ի «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում» ծրագրի շրջանակներում իրականացվելիք «Համայնքային տարածքների վերանորոգում կամ բարելավում» /համայնքապետարանի դահլիճ/ ծրագրի համար կատարելու առնվազն 10 տոկոս համաֆինանսավորում:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** [signature] [stamp] **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.vayotsdzor@mta.gov.am

***Նիստ թիվ 2*** ***«28» փետրվարի 2020 թ.***

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 23-Ա

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ԹԻՎ 58-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հունիսի 26-ի «Գլաձոր համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և այդ հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին» թիվ 58-Ա որոշման բովանդակության մեջ կատարել լրացում՝

1) 4-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 5-րդ կետ. «5. Ստեղծել Գլաձոր համայնքի ավագանու «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերը մրցույթով վարձակալության կամ կառուցապատման, ինչպես նաև աճուրդով օտարելու պայմանները, մեկնարկային գները, լոտը ուսումնասիրող և առաջարկող» հարցերի մշտական հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն սույն որոշման N 5 հավելվածի»:

2) Որոշումը լրացնել նոր՝ N 5 հավելվածով՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [ստորագրություն] | | |
| Գասպարյան Ք. | [ստորագրություն] | | |
| Գևորգյան Ա. | [ստորագրություն] | | |
| Լևոնյան Վ. | [ստորագրություն] | | |
| Մանասերյան Կ. | [ստորագրություն] | | |
| Մարգարյան Ա. | [ստորագրություն] | | |
| Մարգարյան Գ. | [ստորագրություն] | | |
| Մարտիրոսյան Մ. | [ստորագրություն] | | |
| Սարգսյան Է. | [ստորագրություն] | | |
| Սաֆարյան Ե. | [ստորագրություն] | | |
| Վարդանյան Գ. | [ստորագրություն] | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 28-ի թիվ 23-Ա որոշման

# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ԼՈՏԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՂ ՀԱՐՑԵՐԻ» ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

| ՀՀ | Ազգանուն, անուն, հայրանուն |
|---|---|
| 1 | Սարգսյան Էմիլ Էմանուելի |
| 2 | Մանասերյան Կարեն Մայիսի |
| 3 | Մարտիրոսյան Մաղաք Ռաֆիկի |
| 4 | Գևորգյան Արտակ Գնելի |
| 5 | Սաֆարյան Ենոք Վաչագանի |
| 6 | Մարգարյան Գեղամ Սերյոժի |
| 7 | Լևոնյան Վահե Աշոտի |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.vayotsdzor@mta.gov.am

***Նիստ թիվ 2*** — *«28» փետրվարի 2020 թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 24-Ա

### ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ԹԻՎ 17-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 30-ի «Գլաձոր համայնքի ավագանու մշտական հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 17-Ա որոշման բովանդակության մեջ, «Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի» մշտական հանձնաժողովի կազմում, «Գաբրիելյան Արմեն» բառերը փոխարինել «Լևոնյան Վահե» բառերով:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature, stamp] Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
## ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.vayotsdzor@mta.gov.am


***Նիստ թիվ 2*** *«28» փետրվարի 2020 թ.*

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25-Ա

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով, հիմք ընդունելով Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 27-ի թիվ 2-Ն որոշման հավելվածի 1.4-րդ կետը և Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում եկեղեցու կառուցման թույլտվություն ստանալու նպատակով քաղաքացի Լաուրա Հարությունյանի կողմից ներկայացված դիմումը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել որ.

Բարերար Լաուրա Հարությունյանի կողմից Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում եկեղեցու կառուցման շինարարության թույլտվության տրամադրման համար տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ զրոյական դրույքաչափ:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** [signature] **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ



Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.vayotsdzor@mta.gov.am


***Նիստ թիվ 2*** *«28» փետրվարի 2020 թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26

### ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշումը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլանը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** [signature] **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.vayotsdzor@mta.gov.am

***Նիստ թիվ 2*** *«28» փետրվարի 2020 թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 27-Ա

## ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Գլաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետի պահանջը և Գլաձոր համայնքի ավագանու «Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի» մշտական հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 28-ի դրական եզրակացությունը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Համաձայնություն տալ Գլաձոր համայնքի բնակիչներին ֆինանսական օգնություն տրամադրելու համար՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** [signature] **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 30-ի թիվ 27-Ա որոշման

# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ

Գլաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել համայնքի՝

**1. Սոցիալապես անապահով ընտանիքներ և առողջական խնդիրներ ունեցող բնակիչներ ՝**

1) Ալվարդ Շահբազյան՝ Վերնաշեն բնակավայր - 10.000 /տաս հազար / ՀՀ դրամ
2) Թաթուլ Աբգարյան՝ Վերնաշեն բնակավայր - 10. 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
3) Անժելա Մկրտչյան՝Գետափ բնակավայր - 20.000 /քսան հազար / ՀՀ դրամ
4) Համիկ Խորենյան՝ Գետափ բնակավայր - 40.000 /քառասուն հազար / ՀՀդրամ
5) Կարեն Ղարիբյան՝ Գետափ բնակավայր – 50.000 /հիսուն հազար / ՀՀ դրամ
6) Վարսենիկ Ավագյան՝ Գետափ բնակավայր -100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ
7) Քրիստինե Եփրեմյան՝ Գլաձոր – 20.000/ քսան հազար / ՀՀ դրամ
8) Կարինե Թադևոսյան՝ Գլաձոր – 20.000/ քսան հազար / ՀՀ դրամ
9) Արեգնազ Սարգսյան՝ Գլաձոր բնակավայր- 5. 000 /հինգ հազար / ՀՀ դրամ
10) Թամարա Գրիգորյան՝ Գլաձոր բնակավայր- 15. 000 /տասնհինգ հազար / ՀՀ դրամ
11) Մանուշակ Բաղդասարյան՝ Վերնաշեն բնակավայր- 30. 000 /երեսուն հազար / ՀՀ դրամ
12) Արսեն Գալստյան՝ Գլաձոր բնակավայր- 20. 000 /քսան հազար / ՀՀ դրամ
13) Օֆիկ Դավթյան՝ Գլաձոր բնակավայր- 10.000 /տաս հազար / ՀՀ դրամ
14) Սոֆիկ Սայադյան՝ Գլաձոր բնակավայր- 20.000 /քսան հազար / ՀՀ դրամ
15) Անուշ Դիլաքյան՝ Գետափ բնակավայր -25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:

**2. Համայնքում նոր ծնված երեխաներ ունեցող ընտանիքներին՝**

16 ) Արման Մարգարյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
17) Սերոբ Մարտիրոսյան՝ Գլաձոր բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
18) Խաչիկ Գասպարյան՝ Գլաձոր բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
19) Անի Գալստյան՝ Գլաձոր բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
20) Արման Մարգարյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
21) Կարեն Նիկալայան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
22) Ջորիկ Հակոբյան՝ Գլաձոր բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
23) Մերուժան Մանուկյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
24) Արմեն Մարգարյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
25) Լիլիթ Սարգսյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
26) Սյուզի Քարամյան՝ Վերնաշեն բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
27) Դավիթ Հովհաննիսյան՝ Գլաձոր բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
28) Յուրա Վարդանյան՝ Գլաձոր բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:

**Ընդամենը - 720 000 / յոթ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.vayotsdzor@mta.gov.am

***Նիստ թիվ 2*** ***«28» փետրվարի 2020 թ.***

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 28-Ա

### ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 7-րդ, 42-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Գլաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի պահանջը և համայնքի բնակիչներից ստացված դիմումները՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի բնակիչ Վարդան Ժորժիկի Հովհաննիսյանի կողմից ներկայացված դիմումը բավարարել, և համայնքի 2020 թվականի բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից վերջինիս ընտանիքին, որպես օգնություն, տրամադրել 80 000 /ութսուն հազար/ դրամ:
2. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի բնակիչներ Ռաֆիկ Գասպարյանի, Մկրտիչ Գասպարյանի և Վահագն Ասատրյանի կողմից ներկայացված դիմումը բավարարել և համայնքի գույքային հաշվեկշռում առկա խողովակներից 30 մ տրամադրել ոռոգման ջրագծի բարեկարգման համար:
3. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչներ Արթուր Սահակյանի և Ալիկ Հարությունյանի կողմից ներկայացված դիմումը՝ իրենց բնակելի տները գազիֆիկացնելու համար աջակցելու մասին, մերժել, քանի որ նշված գազատարը կառուցելու համար անհրաժեշտ միջոցներ համայնքի բյուջեում նախատեսված չեն:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ